## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 11 ,հեռ.0233 74 6-73

« 28 » դեկտեմբերի 2020 թվականի թիվ 50-Ա որոշում

### ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով,14-րդ հոդվածի 6-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N10 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ - 7 | | ԴԵՄ- 0 | ՁԵՌՆՊԱՀ-0 |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | [signature] | | |
| Ս.Նազարյան | [signature] | | |
| Ն.Եղիկյան | [signature] | | |
| Ջ.Ջոհրաբյան | [signature] | | |
| Ա. Սարգսյան | [signature] | | |
| Ս.Երիցյան | [signature] | | |
| Ն.Գրիգորյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի*
*ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի*
*թիվ 10արտահերթ նիստի N 50-Ա որոշման*

*ՕՐԱԿԱՐԳ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ*
*ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

1.Ավագանու նիստի օրակարգի քննարկման և հաստատման մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
2.Համայնքի կողմից 2021թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափի սահմանման մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2021թվականի բյուջեն հաստատելու մասին. (զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
4. Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների սեփականության 2020թվականի գույքագրման ամփոփ արդյունքները հաստատելու մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համյանքի 2021թվականի ավագանու հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
6. Տրանսպորտային միջոցի գույքահարկի արտոնություն սահմանելու մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)
7. Համայնքի ղեկավարի նկատմամբ դրամական խրախուսում կիրառելու մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար տեղակալ Գևորգ Գրիգորյանը)
8. Համայնքի բյուջեից դրամական օգնություն տրամադրելու մասին.
(Զեկուցող՝ համայնքի ղեկավար Տիգրան Բաղդասարյան)

Աշխ.մի քարտուղար՝ Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28» դեկտեմբերի 2020թվականի N 51-Ն որոշում

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

**Ղեկավարվելով** « Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2020թվականի դեկտեմբերի 17-ի N 27.3/28359-20 փորձագիտական եզրակացությունը , ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի կողմից 2021թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափեր և արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ -* 7 *ԴԵՄ-* 0 *ՁԵՌՆՊԱՀ-* 0

| | | | |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | [signature] | | |
| Ս.Նազարյան | [signature] | | |
| Ն.Եղիկյան | [signature] | | |
| Ջ.Ջոհրաբյան | [signature] | | |
| Ա. Սարգսյան | [signature] | | |
| Ս.Երիցյան | [signature] | | |
| Ն.Գրիգորյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի*
*ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի*
*թիվ 10արտահերթ նիստի N 51-Ն*
*որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ 2021ԹՎԱԿԱՆԻՆ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի կողմից իրավասության շրջանակներում մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝
1) Մյասնիկյան համայնքում մանկապարտեզ հաճախող երեխաներին ծնողական վարձավճար սահմանել՝ հինգ հազար դրամ,
2) Երաժշտական դպրոց հաճախող երեխաների համար ամսական վարձավճար սահմանել՝ երեք հազար դրամ,
3) Համայնքի բնակիչ համարվող անձանց աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագրեր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ,
4) Համայնքի բնակիչ համարվող անձանց արխիվային փաստաթղթեր և տեղեկանքներ տրամադրելու դեպքում սահմանել՝ մեկ հազար դրամ,
5) Համայնքի բնակիչ համարվող անձանց տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ,
2. Բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել չափերով.
1) Մանկապարտեզի և երաժշտական դպրոցի վճարից ազատել՝
ա. միկողմանի և երկողմանի ծնողազուրկ երեխաներին,
բ. զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների և ազատամարտիկների երեխաներին,
գ. նույն հարկի տակ բնակվող երեք և ավել երեխաներից մեկին.

Աշխատակազմի քարտուղար՝ [signature] Ա.Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015
Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

№ 27.3/28353-20
« 17 » 12 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Բաղդասարյան,**

Ի պատասխան Ձեր 2020 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 217 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի վարչական տարածքում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» ավագանու որոշումների նախագծերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

Invalid signature

X

Suren Galstyan

**ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն,
Հեռ. (010) 594-116

համար, ուստի ակտի գործողության ժամկետն անհրաժեշտ է նախատեսել 2021 թվականի հունվարի 1-ից:

6. Նախագծից անհրաժեշտ է հանել «26 նոյեմբերի 2020 թվական Հ.Մյասնիկյան» բառերը:

7. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) գլխագիրը բացակայում է:

8.Հավելվածի կետերի և ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի պահանջներին, մասնավորապես՝ կետերի համարակալումը տեքստից բաժանվում է միջակետով:

9. Հավելվածի 7-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջները, որոնց համաձայն ծխախոտային արտադրանքից բացի տեղական տուրք է սահմանվում նաև **ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար**:

10. **«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի կողմից 2021 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը հաստատելու մասին»** ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) անվանումն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ նշել ակտի բնույթը, ինչպես նաև «ՈՐՈՇՈՒՄ» բառը՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի և 18-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները:

11. Նախագծի անվանումից անհրաժեշտ է հանել «25 նոյեմբերի N 45-Ն որոշման» բառերը:

12. Նախագծի վերնագրում «հաստատելու» բառն անհրաժեշտ է փոխարինել «սահմանելու» բառով՝ նկատի ունենալով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջները:

13.Նախագծի նախաբանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասին հղում կատարելու անհրաժեշտություն չկա:

14.Նախագծի 2-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ Նախագծով սահմանվող համայնքի կողմից մատուցվող ծառայությունների վճարների դրույքաչափերը սահմանվում են 2021 թվականի համար, ուստի ակտի գործողության ժամկետն անհրաժեշտ է նախատեսել 2021 թվականի հունվարի 1-ից:

15.Նախագծից անհրաժեշտ է հանել «26 նոյեմբերի 2020 թվական Հ.Մյասնիկյան» բառերը:

16. Նախագծի հավելվածի (այսուհետ՝ Հավելված) գլխագիրը բացակայում է:

17. Հավելվածի վերնագիրն անհրաժեշտ է խմբագրել, մասնավորապես՝ «դրույքաչափերի հաստատման մասին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «դրույքաչափեր» բառով:

Միաժամանակ առաջարկում ենք Նախագծերում նախատեսված արտոնությունների վերաբերյալ դրույթներն արտացոլել նաև դրանց վերնագրերում, միաժամանակ հստակ նշելով նաև այդ արտոնությունների տրամադրման հիմքերը և դրանց համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալության պետ՝**

Invalid signature

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

**ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28 » դեկտեմբերի 2020թվականի N 52-Ն որոշում

## *ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրպետության արդարադատության նախարարության 2020թվականի դեկտեմբերի 24-ի N27.4/29279-20 պետական փորձագիտական եզրակացությունը, ***ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2021թվականի բյուջեն՝ համաձայն հավելվածի:

1.Համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3.Համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4.Համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 3-ի:

5.Համայնքի բյուջեի ծախսերը ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝համաձայն հատված 6-ի:

6. Համաձայնություն տալ համայնքի 2021թվականի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից համայնքի բյուջեում չնախատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորում իրականացնելուն:

7. Սահմանել 20% չափաքանակ համայնքի 2021թվականի բյուջեի ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման մեջ փոփոխություններ կատարելու համար:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021թվականի հունվարի 1-ից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ -* 7 *ԴԵՄ-* 0 *ՁԵՌՆՊԱՀ-* 0

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | [signature] | | |
| Ս.Նազարյան | [signature] | | |
| Ն.Եղիկյան | [signature] | | |
| Ջ.Ջոհրաբյան | [signature] | | |
| Ա. Սարգսյան | [signature] | | |
| Ս.Երիցյան | [signature] | | |
| Ն.Գրիգորյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015

Էլ. Փոստ suren.galstyan@justice.am

N 27.4/29279-20

«24» 12 2020թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բաղդասարյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 224 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ,

12/24/2020

X

Suren Galstyan

ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ

Կատարող՝ Արաքսյա Առաքելյան
Իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 59-41-23

Արդարադատության
Նախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու որոշման նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

1.Նախագծում անհրաժեշտ է նշել նորմատիվ իրավական ակտի տեսակը: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների դրույթներից:

2.Միևնույն ժամանակ, Նախագծում վերնագրի դրույթներից առաջ ամսաթվի վերաբերյալ տվյալները որոշակի են, որը բնորոշ է արդեն իսկ ընդունված նորմատիվ իրավական ակտին: Մինչդեռ, հարկ ենք համարում նշել, որ փորձաքննության ուղարկվում է նորմատիվ իրավական ակտի նախագիծը, այլ ոչ թե որոշումը, ինչը չի կարող պարունակել որոշակի դրույթներ ամսաթվի վերաբերյալ:

**ՀՀ ԱՆ իրավական ակտերի**
**փորձաքննության գործակալության պետ՝**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28» դեկտեմբերի 2020թվականի N 53-Ա որոշում

## ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ 2020ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Տեղական ինքնակառավարկան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի համայնքապետարանի և ենթակա կազմակերպությունների սեփականության 2020թվականի ամենամյա գույքագրման ամփոփ արդյունքները՝ հավելված 1-ի,2-ի և 3-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ - 7 ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ- 0*

| | | | |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | | | |
| Ս.Նազարյան | | | |
| Ն.Եղիկյան | | | |
| Ջ.Ջոհրաբյան | | | |
| Ա. Սարգսյան | | | |
| Ս.Երիցյան | | | |
| Ն.Գրիգորյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

**«28» դեկտեմբերի 2020թվականի N 54-Ա որոշում**

## ՄՅԱՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Տեղական ինքնակառավարկան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով,***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ավագանու 2021թվականի նիստերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից.

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ -* 7 *ԴԵՄ-* 0 *ՁԵՌՆՊԱՀ-* 0

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | [signature] | | |
| Ս.Նազարյան | [signature] | | |
| Ն.Եղիկյան | [signature] | | |
| Ջ.Ջոհրաբյան | [signature] | | |
| Ա. Սարգսյան | [signature] | | |
| Ս.Երիցյան | [signature] | | |
| Ն.Գրիգորյան | [signature] | | |

Համայնքի ղեկավար՝ [signature] Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի*
*2020թվականի դեկտեմբերի 28-ի N 10ավագանու*
*արտահերթ նիստի N 54-Ա որոշման*

*ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

| N | Ավագանու նիստեր | Ամիս | Ամսաթիվ |
|---|---|---|---|
| 1 | Թիվ 1 նիստ | փետրվար | 26 |
| 2 | Թիվ 2 նիստ | ապրիլ | 14 |
| 3 | Թիվ 3 նիստ | հունիս | 14 |
| 4 | Թիվ 4 նիստ | օգոստոս | 12 |
| 5 | Թիվ 5 նիստ | հոկտեմբեր | 13 |
| 6 | Թիվ 6 նիստ | դեկտեմբեր | 16 |

*Աշխ.մի քարտուղար* *Ա.Խաչատրյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28» դեկտեմբերի 2020թվականի N 55-Ա որոշում

## ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Ղեկավարվելով** «Տեղական ինքնակառավարկան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , <<Գույքահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքում գործող սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը,***համայնքի ավագանին որոշում է՝***

1. Համայնքի բնակիչների նկատմամբ սահմանել տրանսպորտային միջոցի գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ -* 5 *ԴԵՄ-* 0 *ՁԵՌՆՊԱՀ-* 2

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | (ստորագրություն) | | |
| Ս.Նազարյան | (ստորագրություն) | | |
| Ն.Եղիկյան | (ստորագրություն) | | |
| Ջ.Ջոհրաբյան | | | (ստորագրություն) |
| Ա. Սարգսյան | (ստորագրություն) | | |
| Ս.Երիցյան | | | (ստորագրություն) |
| Ն.Գրիգորյան | (ստորագրություն) | | |

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համանքի*
*ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի*
*թիվ 10 հերթական նիստի N 55-Ա որոշման*

ՑՈՒՑԱԿ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| N | Ազգանուն | Անուն | հայրանուն | Արտոնության գումարը(դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Հովհաննիսյան | Վահրամ | Մյասնիկի | 9100 |
| 2 | Զոհրաբյան | Մարտիրոս | Սերգեյի | 7800 |
| 3 | Գալոյան | Սարգիս | Սերգեյի | 7200 |
| 4 | Պետրոսյան | Գերասիմ | Ռուբերտի | 19200 |
| 5 | Ափինյան | Սամվել | Հարությունի | 10100 |
| 6 | Բրոյան | Մրազ | Ջասմի | 8100 |
| 7 | Շահինյան | Կամո | Կարապետի | 12150 |
| 8 | Պետրոսյան | Սամվել | Անդրանիկի | 7600 |
| 9 | Գալստյան | Աշոտ | Մուրադի | 18500 |
| 10 | Հարությունյան | Արմեն | Գևորգի | 18500 |
| 11 | Փահլևանյան | Մկրտիչ | Մամիկոնի | 9100 |
| 12 | Կուրդինյան | Հայկազ | Վարդանի | 7700 |
| 13 | Չախալյան | Միհեր | Գրիշայի | 20000 |
| 14 | Նիկոյան | Աննա | Գևորգի | 10200 |
| 15 | Երիցյան | Ստեփան | Աբրահամի | 21300 |
| 16 | Խաչատրյան | Մարատ | Անդրանիկի | 20600 |

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28» դեկտեմբերի 2020թվականի N 56 -Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով , Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով,հիմք ընդունելով համայնքի 2020թվականի բյուջեի տարեկան կտրվածքով նախատեսված եկամուտների հավաքագրման բարձր ցուցանիշները , ***համայնքի ավագանին որոշում է՝***

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի ղեկավարի նկատմամբ կիրառել խրախուսանք, հատկացնելով միանվագ դրամական պարգևատրում՝ պաշտոնական դրույքաչափի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ - 7 | | ԴԵՄ- 0 | ՁԵՌՆՊԱՀ- 0 |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | | | |
| Ս.Նազարյան | | | |
| Ն.Եղիկյան | | | |
| Ջ.Ջոհրաբյան | | | |
| Ա. Սարգսյան | | | |
| Ս.Երիցյան | | | |
| Ն.Գրիգորյան | | | |

Համայնքի ղեկավար Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մյասնիկյան համայնք , Մյասնիկյան 4 ,հեռ.0233 74 6-73

«28 » դեկտեմբերի 2020թվականի N 57-Ա որոշում

## *ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը , համայնքի ավագանին ***որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին՝***

1.Համայնքի բյուջեից 580.0 հազար դրամ գումար տրամադրել թվով 17 սոցիալապես անապահով ընտանիքների, որպես դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2.Մյասնիկյանի համայնքապետարանի առաջատար մասնագետին՝ (Ս.Մաղաքյանին) գումարի վճարումը կատարել տասնօրյա ժամկետում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ -* 6 *ԴԵՄ-* 0 *ՁԵՌՆՊԱՀ-* 1

| | ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ |
|---|---|---|---|
| Ա.Ներսիսյան | | | |
| Ս.Նազարյան | | | |
| Ն.Եղիկյան | | | |
| Ջ.Ջոհրաբյան | | | |
| Ա. Սարգսյան | | | |
| Ս.Երիցյան | | | |
| Ն.Գրիգորյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Տ.Բաղդասարյան

*2020թվականի դեկտեմբերի 28,*
*Հ.Մյասնիկյան*

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*Արմավիրի մարզի Մյասնիկյան համայնքի*
*ավագանու 2020թվականի դեկտեմբերի 28-ի*
*թիվ 10արտահերթ նիստի N 57-Ա որոշման*

ՑՈՒՑԱԿ
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

| N | Ազգանուն | Անուն | հայրանուն | Սոց.օգնության գումարը(դրամ) |
|---|---|---|---|---|
| 1 | Ազատյան | Սուսաննա | Աբրահամի | 50000 |
| 2 | Մելքոնյան | Լուսինե | Մելիքի | 30000 |
| 3 | Հարությունյան | Անի | Բաղալի | 20000 |
| 4 | Երիցյան | Անժիկ | Արոյի | 50000 |
| 5 | Գրիգորյան | Գուրգեն | Մաթևոսի | 50000 |
| 6 | Ջուռնաչյան | Ոսկան | Ալբերտի | 30000 |
| 7 | Մանուկյան | Արմինե | Անդրանիկի | 20000 |
| 8 | Ջաղոյան | Սուրեն | Ավետիսի | 20000 |
| 9 | Ապինյան | Էդիկ | Կիրովի | 50000 |
| 10 | Հակոբյան | Ալվարդ | Հակոբի | 20000 |
| 11 | Զաքարյան | Ժաննա | Հրանտի | 50000 |
| 12 | Թորոսյան | Լիանա | Սոխակի | 50000 |
| 14 | Չախալյան | Թինաթին | Բեգլարի | 50000 |
| 15 | Պետրոսյան | Հայկազ | Ժորայի | 20000 |
| 16 | Փափազյան | Հովհաննես | Մաթևոսի | 20000 |
| 17 | Ավետիսյան | Անի | Ռոմանի | 50000 |
| Ընդհամենը | | | | 580000 |

Աշխ.մի քարտուղար՝ Ա.Խաչատրյան